

**ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ  
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ՏՄԻՀ-ԳՀԾՁԲ-21/01**

ք. Իջևան

«17» փետրվարի 2021 թ.

«Իջևանի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Հայկ Ղալումյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱԶ Մելիք Ահարոնյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V_1 = V_2 / N_1 \times D \times P$ , որտեղ՝

V<sub>1</sub>-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

V<sub>2</sub>-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

N<sub>1</sub>-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

D-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

P-ն մատուցված ծառայության քանակն է:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

<sup>18</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

<sup>19</sup> Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>22</sup>

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագրի կնքելու միջոցով

<sup>20</sup> Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավրոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պայուշած կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

<sup>22</sup> Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:<sup>23</sup>

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>24</sup>

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԳՆՈՐԴ**

Իջևանի համայնքապետարան

ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,

Երևանյան փողոց թիվ 6

ՀՀ 07601785

Հ/Հ 900372151044

ՀՀ Ֆին. նախարարություն գործառնական

վարչություն

Համայնքի ղեկավարի

պաշտոնակատար՝

Յ. Դալումյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Մելիք Ահարոնյան

Հասցե՝ ք. Իջևան, Արցախյան 4/3

Կոնվերս Բանկ ՓԲԸ

1930045519020100

70930303

Մելիք Ահարոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

<sup>23</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապետել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը* *
2	50111130	Ներկայացված է ստորև	դրամ	2500000	1	Պարտադիր պայման սպասարկման կայանը լինի ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքում կամ քաղաքից մինչև 3 կմ հեռավորության վրա	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30.06.2021 թ.

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	<b>Չափաբաժին 1</b>	
		Տոյոտա Քեմրի արտադրված 2006թ. , Mercedes Benz S 500 արտադրված 2008թ.	
	<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանումները</b>		
		Տոյոտա Քեմրի արտադրված 2006թ. ,	Mercedes Benz S 500 արտադրված 2008թ.
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>
1	Բռնկման համակարգի ստուգում	2000	2000
2	Կցորդման համակարգի ստուգում	0	0
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	5000	5000
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	4000	4000
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	4000	4000

**SU-2 ներառվող ծառայությունների  
անվանումները**

**1.Շարժիչ**

6	Շարժիչի հանում և տեղադրում	50000	70000
7	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	0	0
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	100000	150000
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	3000	3000
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	3500	3500
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	3000	3000
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	1500	1500
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	4000	4000
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	3000	3000
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3000	3000
16	Շարժիչի մխոցաօդերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	3500	3500
17	Ծնկաձև լիսեռի հղկում	1500	1500
18	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	3000	3000
19	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	4000	4000
20	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	3500	3500
21	Ծնկաձև լիսեռի ուղղում	0	0
22	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5000	5000
23	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5000	5000
24	Շարժիչի բլոկի փոխարինում	0	0
25	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	1500	1500
26	Մխոցի փոխարինում 1 հատ	3000	3000
27	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500	150
28	Բաշխիչ լիսեռի ականցների հանում և տեղադրում կամ փոխարինում	400	400
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	1500	1500
30	Փոկանիվի փոխարինում	300	300
31	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	500	500
32	Շարժիչի շղթայի փոխարինում	5000	5000
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	1000	1000
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	1000	1000
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	2000	2000
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	1000	1000
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	0	0
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	0	0
39	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	0	0
40	Յուղի ծորակի փոխարինում	0	0
41	Օդաքաշակ փողրակի փոխարինում	0	0

42	Բ/լիստեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	10000	15000
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000
45	Շարժիչի կափույրի փոխարինում	0	0
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	0	0
47	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	0	0
48	Գլխիկի հեղույսի փոխարինում	0	0
49	Ծնկաձև լիստեռի հեղույսի փոխարինում	0	0
50	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	0	0
51	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	0	0
52	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	0	0
53	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	7000	7000
54	Շարժիչի բաշխիչ լիստեռի երիթակի փոխարինում	0	0
55	Ատամնանիվի փոխարինում	1000	1000
56	Ատամնանիվի փոկի փոխարինում	0	0
57	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	0	0
58	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	0	0
59	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	4000	4000
60	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	4000	4000
61	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	0	0
62	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	0	0
63	Գլխիկի հեղույսի փոխարինում	0	0
64	Ծնկաձև լիստեռի հեղույսի փոխարինում	0	0
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	0	0
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	0	0
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
67	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1000	1000
68	Ավտոմեքենայի յուղում	0	0
69	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	5000	5000
70	Յուղի ռադիատորի փոխարինում	0	0
71	Յուղի ռադիատորի նորոգում	0	0
72	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	0	0
73	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	0	0
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	4000	10000
75	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	6000	6000
76	Օդի գտիչի փոխարինում	1500	1500
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
78	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	0	0
79	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	0	0

80	Կարբյուրատորի վերանորոգում	0	0
81	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	0	0
82	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	4000	8000
83	Բոցամուղի կողավորում	0	0
84	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	0	0
85	Բենզամղիչի փոխարինում	7000	15000
86	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	0	0
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
88	Բռնկման կարգավորում	0	0
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0	0
91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
92	Վառելիքի բաքի մաքրում	0	0
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում	0	0
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
95	Տրամյորի վերանորոգում	0	0
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	0	0
97	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	0	0
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	2000	2000
99	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	0	0
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	0	0
101	Տվիչի փոխարինում	0	0
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>			
102	Հովհարի փոխարինում	0	0
103	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
104	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	12000
105	Ռադիատորի նորոգում	6000	10000
106	Շերտափեղկի փոխարինում	0	0
107	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	0	0
108	Ընդարձակող բաքի փոխարինում	0	0
109	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	0	0
110	Ջրի ծորակի փոխարինում	0	0
111	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	0	0
112	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	17000	20000
114	Վառարանի ռադիատորի նորոգում	0	0
115	Վառարանի շարժիչի փոխարինում	0	0
116	Թերմոստատի փոխարինում	5000	5000
117	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	15000	18000
118	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	0	0

119	Գեներատորի փոկի փոխարինում	4000	4000
120	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	0	0
121	Ջրի ռադիատորի վերանորոգում	4000	4000
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում	0	0
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000	1000
124	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	1000	1000
125	Խլարարի անուրի (xамыр) փոխարինում	1000	1000
126	Խլարարի ներդիրի փոխարինում	1000	1000
127	Խլարարի կախոցի փոխարինում	2000	2000
128	Հովացման հեղուկի փոխարինում	100	1000
<b>4. Կցորդում և ՓՏ</b>			
129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	0	0
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	15000	15000
132	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
134	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
135	Կցորդման երկժանիի փոխարինում	0	0
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	0	0
137	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	0	0
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	0	0
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	0	0
140	ՓՏ-ի հանում և տեղադրում	27000	27000
141	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	0	0
142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	0	0
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0	0
144	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	0	0
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	0	0
146	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	0	0
147	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	0	0
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	0	0
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	0	0
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	13000	13000
152	Վազբաշափի շարժաբերի փոխարինում	0	0
<b>5. Բաշխիչ տուփի, կարդանային լիսեռ</b>			
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	0	0
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	0	0
156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0

158	Բաշխիչ տուփի դիֆերենցիալ փոխարինում	0	0
159	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	0	0
160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	0	0
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	0	0
162	Բաշխիչ տուփի երկրորդային փոխարինում	0	0
163	Բաշխիչ տուփի բարձր կարգի փոխարինում	0	0
164	Բաշխիչ տուփի խտաբուլի փոխարինում	0	0
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	0	0
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	0	0
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
169	Տվիչի փոխարինում	0	0
170	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	0	0
171	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>			
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
173	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	0	0
174	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
175	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	0	0
176	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուլների փոխարինում	0	0
177	Կամրջակի յուղի փոխարինում	0	0
178	Առջևի կամրջակի բռնցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0
180	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
181	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0	0
182	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
183	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	0	0
184	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուլների փոխարինում	0	0
185	Հետևի կամրջակի բռնցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
186	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0
187	Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում	0	0

188	Կամրջակի տվիչի փոխարինում	0	0
<b>7. Կախոց</b>			
189	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	13000	13000
190	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000
191	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	0
192	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4000
193	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4000
194	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	0
195	Անվակունդի գամասեղի և հեղույսի փոխարինում(մեկ անիվի համար)	0	0
196	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկների փոխարինում	0	0
197	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1500	1500
198	Առջևի զսպանակի փոխարինում	0	0
199	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
200	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	0	0
201	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000-	4000
202	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	4500	4500
203	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	0	0
204	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	0	0
205	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
206	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	4000	4000
207	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	0	0
208	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	4000	4000
209	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	0	0
210	Գնդե հողակապերի փոխարինում	4000	4000
211	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
212	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000	4000
213	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	5000	5000
214	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	5000	5000
215	Կայունարարի կալունակի փոխարինում	0	0
216	Հետևի զսպանակների փոխարինում	0	0
217	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
218	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500	4500
219	Չսպանի փոխարինում	0	0
220	Չսպանի վռանների փոխարինում 1 հատ	0	0
221	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	5000	5000
222	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	0	0

223	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	4000	4000
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>			
224	Ղեկասյունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում,	40000	40000
225	Ղեկասյունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	0	0
226	Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային սոնու փոխարինում	0	0
227	Ղեկասյունակի(USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	0	0
228	Ղեկասյունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածույի փոխարինում	0	0
229	Ղեկասյունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	0	0
230	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	0	0
231	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	0	0
232	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	0	0
233	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	0	0
234	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	0	0
235	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	0	0
236	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	4000	4000
237	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	0	0
238	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
239	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	0	0
240	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	0	0
241	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
242	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	5000	5000
243	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	0	0
244	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում	0	0
245	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
246	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	0	0
247	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
248	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	0	0
249	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	0	0
250	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	0	0
<b>9. Արգելակային համակարգ</b>			
251	Վակումային ուժեղարարի փոխարինում	1500	15000
252	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	0	0

253	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500	1500
254	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	800	800
255	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
256	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	1300	1300
257	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
258	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
259	Առջևի սուպպորտի վերանորոգում	5000	5000
260	Հետևի սուպպորտի վերանորոգում	5000	5000
261	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	0	0
262	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	0	0
263	Արգելակային փողրակի փոխարինում	1500	1500
264	արգելակային կոճղակների փոխարինում	5000	5000
265	Արգելակային համակարգի օդահանում	2500	2500
266	սկավառակային կոճղակների փոխարինում	0	0
267	թմբուկային կոճղակների փոխարինում	0	0
268	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3000	3000
269	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	6000	6000
270	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3000	5000
271	Հետևի արգելակային թմբուկա հղկում 1հատ	0	0
272	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
273	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	5000	8000
274	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
275	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	0	0
276	Հետևի արգելակների կարգավորում	0	0
288	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	0	0
289	Մեկնարկիչի իրանի փոխարինում	0	0
290	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	0	0
291	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	0	0
292	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	0	0
293	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	0	0
294	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	12000	15000
295	Ազդանշանի կարգավորում	0	0
296	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
297	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
298	Սարքերի պանելի հանում և տեղադրում	0	0
299	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0

300	Առջևի լապտերների կարգավորում	1500	1500
301	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	0	0
302	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	2500	2500
303	Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում	0	0
304	Վազքաչափի փոխարինում	0	0
305	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
306	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	0	0
307	Ապակեվվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
308	Ապակեվվացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
309	Ապահովիչների փոխարինում	400	400
310	Ապակեամբարձիչների փոխարինում	2000	4000
311	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	0	0
312	Էլեկտրական տվիչների փոխարինում	0	0
313	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1500	1500
314	Մարտկոցի փոխարինում	0	0
315	Մարտկոցի կլեյմանների փոխարինում	0	0
316	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	0	0
317	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	0	0
318	Ավտոմեքենայի ալեհավաքի փոխարինում	0	0
319	Ավտոմեքենայի ալեհավաքի նորոգում	0	0
320	Էլ/ կոճակի փոխարինում	0	0
321	Էլեկտրական շտեյլերի փոխարինում	0	0
322	Ջրի ցողիչի փոխարինում	0	0
323	Բամպերի փոխարինում	0	0
324	Բամպերի կալունակի փոխարինում	0	0
325	Բամպերի բալկայի փոխարինում	0	0
326	Բեռնախցիկի փոխարինում	0	0
327	Բեռնախցիկի փականի փոխարինում	0	0
328	Բեռնախցիկի ռետինի փոխարինում	0	0
329	Դռան պաստառի փոխարինում	0	0
330	Հագոցի փականի փոխարինում	0	0
<b>10. Ավտոմեքենայի սրահ</b>			
331	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	1000	1000
332	Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում	1000	1000
333	Նստատեղի վերանորոգում	1000	1000
334	Սրահի պաստառապատում	1000	1000
335	Սրահի ձայնամեկուսացում	1000	1000
336	Ապակիների մզեցում	1000	1000
337	Դռան փականի փոխարինում	1000	1000
338	Բեռնախցիկի ճոպանի փոխարինում	1000	1000
339	Դռների դրսի բռնակ փոխարինում	1000	1000
340	Դռների ներսի բռնակ փոխարինում	1000	1000
341	Դռների ռետինների փոխարինում	1000	1000
342	Դռների ապակիների ռետինների	1000	1000

	փոխարինում		
343	Լամպի փոխարինում	1000	1000
344	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	1000	1000
345	Դիմապակու փոխարինում	20000	20000
12. Այլ ծառայություններ			
346	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար	0	0
347	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում գին 1 կտորի համար	0	0
348	Եռակցման աշխատանքներ գին 1սմ (զծ.մ) համար	0	0
349	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	0	0
350	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	0	0
351	Ավտոմեքենայի լվացում	0	0
352	Ավտոմեքենայի շարժիչի լվացում	0	0
353	Առջևի կամ հետևի անվաքացքի կարգավորում	0	0
354	Անիվի հանում և տեղադրում	0	0
355	Անվադրողի վերանորոգում	0	0
356	Անիվի բալանսավորում	0	0
357	Անիվի վալց	0	0
358	Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում	0	0
359	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	0	0
360	Ավտոմեքենայի հագոցի փոխարինում	0	0
361	Ավտոմեքենայի հագոցատակի փոխարինում	0	0
362	Ավտոմեքենայի կողային ապակու փոխարինում	0	0
363	Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում	0	0
364	Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում	0	0
365	Ավտոմեքենայի դռան փոխարինում	0	0
<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>			
<b>1.Շարժիչ</b>			
	Շարժիչ	500000	500000
1	Շարժիչի բլոկ	727500	800000
2	Շարժիչի գլխիկ	582000	600000
3	Բարձիկ	40000	40000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	4500	4500
5	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	0	0
6	Շարժիչի փական դուրս մղող	400	4000
7	Շարժիչի փական ներս մղող	5000	5000
9	Փականի զսպանակ	4500	4500
10	Ծնկաձև լիսեռ	1000	1000
11	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի	4000	4000
12	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի	4000	4000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	1000	1000

14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	1000	1000
15	Մխոց	1000	1000
16	Մխոցային օղակներ	1000	1000
17	Մխոցային մատ	1000	1000
18	Ատամնանիվ	0	0
19	Ատամնավոր փոկ	0	0
20	Շարժիչի կափույր	0	0
21	Շարժիչի կափույրի կափարիչ	0	0
22	Շարժիչի շղթա	0	0
23	Շարժիչի պաշտպանիչ	0	0
24	Փոկի ձգիչ	0	0
25	Հիդրոձգան	0	0
26	Հրիչ	0	0
27	Շարժիչի հիդրոռիչիչ	0	0
28	Շարժիչի կալուն	0	0
29	Շարժիչի հանդարտիչ	0	0
30	Շարժիչի հողովակ	0	0
31	Շարժիչի հողովակի առանցքակալ	0	0
32	Շարժիչի առջևի կափարիչ	0	0
33	Շարժիչի վերևի կափարիչ	0	0
34	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	0	0
35	Թափանիվ	0	0
36	Շարժաթև	0	0
37	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	0	0
38	Ատամնանիվ ծնկաձև լիսեռի	0	0
39	Փոկանիվ ծնկաձև լիսեռի	0	0
40	Փոկանիվ	0	0
41	Սուխարիկ փականի	0	0
42	Գլխիկի բոլտ	0	0
43	Ծնկաձև լիսեռի բոլտ	0	0
44	Պարկուճ	0	0
45	Քարտեր	0	0
46	Շարժիչի ատամնավոր փոկ	0	0
47	Պատյան ատամնավոր փոկի	0	0
48	Փական յուղի տարայի	0	0
49	Խուփ ընդարձակման բաքի	0	0
50	Խուփ շարժիչի	0	0
51	Թաթիկ յուղի մղիչի	0	0
52	Բարձիկ փ/տուփի	0	0
53	Յուղի մղիչ	0	0
54	Միջադիր յուղի մղիչի	0	0
55	Յուղի ծորակ	0	0
56	Շարժիչի յուղի արանքաչափիչ	0	0
57	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	0	0
58	Կափույրի միջադիր	0	0
59	Քարտերի միջադիր	0	0
60	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0	0
61	Բ/լիսեռի կափարիչ	0	0
62	Բ/լիսեռի խտաբուկ	0	0
63	Շարժիչի Բ/լիսեռի ականոց	0	0

64	Շարժիչի ք/լիսեռի երիթակ	100	100
65	Ուղղորդիչ վռան	100	100
66	Շարժիչի գամասեղ	100	100
67	Գլխիկի միջադիր	5000	5000
<b>2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
68	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	1500	2000
69	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	5000	6000
70	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6000	8000
71	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1 լիտր	2000	3000
72	Յուղի գտիչ	2000	4500
73	Յուղի ռադիատոր	0	0
74	Վառոցքի կոճ	20000	40000
75	Արտածման կալեկտոր աջ	0	0
76	Արտածման կալեկտոր ձախ	0	0
77	Ներածման կալեկտոր աջ	0	0
78	Ներածման կալեկտոր ձախ	0	0
79	Արտածման կալեկտորի աջ միջադիր	0	0
80	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	0	0
81	Ներածման կալեկտորի աջ միջադիր	0	0
82	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	0	0
83	Վառոցքի մոմ	7000	7000
84	Բենզոլաքի բենզոլիչի ցանց	0	0
85	Բենզոլիչ	18000	30000
86	Բենզոլաք	0	0
87	Կարբյուրատոր	0	0
88	Կարբյուրատորի լրակազմ	0	0
89	Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի	0	0
90	Բոցամուղի խտաբուկ	0	0
91	Վառելանյութի մղիչ էլեկտրական	0	0
92	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	7000	22000
93	Վառելիքի կոշտ մաքրման գտիչ	0	0
94	Վառելանյութի խողովակ	0	0
95	Օդի գտիչ	3000	6000
96	Օդի ծախսաչափիչ	0	0
97	Օդի գտիչի փողրակ	0	0
98	Զերմաստիճանային տվիչ	0	0
99	Յուղի տվիչ	0	0
100	Բաշխիչ լիսեռի տվիչ	0	0
101	Օդի ծախսի տվիչ	0	0
102	Արագաչափի տվիչ	0	0
103	Հովհարի տվիչ	0	0
104	Զրի խողովակ երկար	6000	8000
105	Զրի խողովակ կարճ	0	0
106	Զրի տվիչ	0	0
107	Բենզոլաքի տվիչ	0	0
108	Մարման ընթացքի կարգավորիչ	0	0
109	Ղեկավարման համակարգիչ	0	0
110	Պարապ ընթացքի տվիչ	0	0
111	Թթվածնի տվիչ	0	0

3. Սառեցման և արտածման համակարգ			
112	Հովհար	0	0
113	Հովհարի շարժիչ	0	0
114	Հովհարի թևանիվ	0	0
115	Ռադիատոր	50000	100000
116	Ընդարձակող բաքի փական	0	0
117	Ընդարձակող բաքի փողրակ	2000	2000
118	Ընդարձակող բաք	0	0
119	Ռադիատորի փողրակ ներքևի	2500	2500
120	Ռադիատորի փողրակ վերևի	6000	10000
121	Թերմոստատ	10000	20000
122	Ջրի մղիչ	23000	35000
123	Ջրի մղիչի միջադիր	0	0
124	Ջրի պոմպի խտաբուկ	0	0
125	Ջրի պոմպի առանցքակալ	0	0
126	Ջրի պոմպի թևակ	0	0
127	Սառեցման հեղուկ 1 լիտր	3000	3000
128	Չսառչող հեղուկ ապակիների համար	2500	2500
129	Ձգիչ հողովակի	4500	4500
130	Փոկ մեծ	9000	9000
131	Հովացման համակարգի ռետինե խողովակ	0	0
132	Ծորակ	0	0
133	Փոկանիվ գեներատորի փոկի	0	0
134	Միջադիր թերմոստատի	0	0
135	Խլարարի ներդիր	0	0
136	Խլարարի կախոց	0	0
137	Խլարարի խողովակ	0	0
138	Կրոնշտեյն	0	0
139	Խլարարի անուր (Խամուտ)	0	0
140	Խլարար	0	0
141	Շարժիչ վառարանի	0	0
142	Վառարանի ռադիատոր	12000	25000
143	Կցորդման աշխատանքային գլան	0	0
144	Կցորդման գլխավոր գլան	0	0
145	Կցորդման գլխավոր գլանի կալունակ	0	0
146	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0	0
147	Կցորդման սեղմող սկավառակ	0	25000
148	Կցորդման տարվող սկավառակ	0	25000
149	Կցորդման առանցքակալ	0	2000
150	Կցորդման ոտնակ	0	0
151	Կցորդման ճոպան	0	0
152	ՓՏ-ի յուղ	9000	13000
153	ՓՏ-ի պատյան	0	0
154	ՓՏ-ի առջևի խտաբուկ	0	0
155	ՓՏ-ի հետևի խտաբուկ	0	0
156	Վազբաջափի շարժաբեր	0	0
157	ՓՏ-ի առանցքակալ	0	0
158	ՓՏ-ի փոխանցման փոշեթիկնոց	0	0
159	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ	0	0

160	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0	0
161	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	0	0
162	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0	0
163	ՓՏ-ի երկժանի	0	0
164	ՓՏ-ի ատամնանիվ	0	0
165	Համաժամիչ	0	0
166	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0	0
167	Հերմետիկ	4500	4500
<b>4. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>			
168	Բաշխիչ տուփ	0	0
169	Բաշխիչ տուփի խցուկ	0	0
170	Բաշխիչ տուփի առանցքակալ	0	0
171	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0	0
172	Բաշխիչ տուփի լիսեռ	0	0
173	Կարդանային լիսեռ	0	0
174	Էլաստիկ մուֆտ	0	0
175	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0	0
176	Կարդանային լիսեռի խաչուկ	0	0
<b>5. Առջևի և հետևի կամրջակներ</b>			
177	Հետևի կամ առջևի կամրջակ	0	0
178	Ռեդուկտոր	0	0
179	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0	0
180	Դիֆֆերենցիալ	0	0
181	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0	0
182	Տանող ատամնանիվի խցուկ	0	0
183	Տանող ատամնանիվի առանցքակալ	0	0
184	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0	0
185	Ձախ կամ աջ կիսաստնու փոշեթիկնոց	0	0
186	Կիսաստնի	0	0
187	Կիսաստնու առանցքակալ	0	0
188	Կիսաստնու միջադիր	0	0
189	Կիսաստնու խցուկ	4500	4500
190	Կարգավորիչ տափողակ	0	0
<b>6. Կախոց</b>			
191	Տրավերս	0	0
192	Կրոնշտեյն	0	0
193	Աջ կամ ձախ հողակապ	20000	40000
194	Անվակունդ	42000	42000
195	Անվակունդի խցուկ	0	0
196	Անվակունդի ներքին առանցքակալ	0	0
197	Անվակունդի արտաքին առանցքակալ	0	0
198	Հետևի անվակունդի առանցքակալ	0	0
199	Հարվածամեղմիչի թասակ	12000	30000
200	Ջսպանակ	18000	0
201	Առջևի հարվածամեղմիչ	50000	80000
202	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	5000	12000
203	Հարվածամեղմիչի վռան	3000	7000
204	Ներքևի լծակ	0	0
205	Ներքևի լծակի վռան	5000	5000

206	Վերևի լծակ	0	0
207	Շկվոնի	0	0
208	Ռեզրավոյ	0	0
209	Վերևի լծակի վրան	7000	7000
210	Գնդե հողակապ	7000	7000
211	Առջևի կայունարար	0	0
212	Առջևի կայունարարի վրան	4000	4000
213	Առջևի կայունարարի կանգնակ	1000	10000
214	Հետևի զսպանակ	0	0
215	Ճոճանակային լծակ	0	0
216	Ճոճանակային լծակի վրան	3500	3500
217	Հետևի ցնցամեղմիչ	42000	50000
218	Հետևի մետաղաձող (շտանգա)	0	0
219	Հետևի մետաղաձողի (շտանգա) վրան	10000	15000
220	Հետևի անկյունագծային լծակ	0	0
221	Անկյունագծային լծակի վրան	4500	4500
222	Զսպակ (ռեսսորա)	0	0
223	Զսպակի վրան	0	0
224	Զսպակի միջադիր	0	0
225	Զսպակի բռնիչ	0	0
226	Աջ կամ ձախ ձգան	8000	8000
<b>7. Ղեկային մեխանիզմ</b>			
227	Ղեկային կալուն	0	0
228	Ղեկային կալունի առանցքակալ	0	0
229	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	18000	30000
230	Ղեկային կալունի խաչուկ	8500	8500
231	Հիդրոուժեղարարի փոկ	0	0
232	Հիդրոուժեղարարի պոմպ	0	0
233	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0	0
234	Ձգան մեջտեղի	0	0
235	Ղեկային ձող	0	0
236	Ղեկային ձողի ծայրակալ	0	0
237	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	4000	6000
238	Ճոճանակ	0	0
239	Ճոճանակի վրան	0	0
<b>8. Արգելակային համակարգ</b>			
240	Գլխ. գլան	0	0
241	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0
242	Վակուումային ուժեղարար	0	0
243	Բանվ. գլան	0	0
244	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0
245	Արգելակային փողրակ	4000	4000
246	Սուպպորտ	0	0
247	Արգելակային հեղուկ	1500	7000
248	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	18000	25000
249	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	15000	0
250	Առջևի արգելակային սկավառակ	30000	50000
251	Ձեռքի արգելակի ճոպան	0	0

252	Ձեռքի արգելակի լծակ	0	0
<b>9. Էլեկտրասարքավորում</b>			
253	Գեներատոր	0	0
254	Գեներատորի դիողային կամրջակ	0	0
255	Գեներատորի ռելե	15000	20000
256	Գեներատորի առանցքակալ	4500	4500
257	Ստարտեր	0	0
258	Ստարտերի ռելե	0	0
259	Դիմապակի	40000	50000
260	Դիմապակու ռեզին	4500	4500
261	Ստարտերի ածուխ	15000	20000
262	Բենդեքս	0	0
263	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	0	0
264	Առջևի լապտեր	0	0
265	Հետևի լապտեր	0	0
266	Հակամշուշային լապտեր	0	0
267	Առջևի թարթիչ	0	0
268	Հետևի թարթիչ	0	0
269	Արգելակային լապտեր	0	0
270	Լուսարձակի փոխարինում	110000	110000
271	Խցիկի լապտերի լամպ	500	1000
272	Արգելակային լապտերի լամպ	1500	1500
273	Առջևի թարթիչ լապտերի լամպ	1500	1500
274	Հետևի թարթիչի լապտերի լամպ	1500	1500
275	Հետևի լապտերի լամպ	1500	1500
276	Հակամշուշային լապտերի լամպ	4000	4000
277	Արգելակային լապտերի լամպ	0	0
278	Առջևի լապտերի լամպ	13000	15000
279	Էլեկտրական անջատիչ	800	800
280	Էլեկտրական տվիչ	800	800
281	Տախոմետր	0	0
282	Ապակեմաքրիչ	2000	4000
283	Բոնկման կողպեք	0	0
284	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	0	0
285	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	0	0
286	Վառոցքային լարերի խուրց	0	0
287	Վառոցքի մոմի ծայրակալ	3000	3000
288	Վազքաչափ	0	0
289	Վազքաչափի ճոպան	0	0
290	Դռան կողպեք	0	0
291	Ազդանշան	10000	20000
292	Ապակեվազիչի բաշոկ	0	0
293	Ապակեվազիչի շարժիչ	0	0
294	Դռների կենտրոնական փական	0	0
295	Հայելի կողային	35000	35000
296	Ազդանշանային համակարգ	30000	0
297	Դռան ապակու ամբարձիչ	10000	15000
298	Դռան ապակու էլեկտրաամբարձիչի շարժիչ	0	0
299	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորոգման համար	0	0

**Ծառայությունների մատուցումն պարտադիր Իջևան քաղաքի մեջ կամ նրանից մինչև 3կմ հեռավորությամբ:**

Ծառայությունների մատուցման ժամկետը՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:

1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրը առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և երկու օրացույցային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:
3. Կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քսայուղեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը:
4. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողությամբ:
5. Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
6. Մեքենաների շարժիչների կապիտալ վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս, փոխանցման տուփերի, կամրջակների և դեկային կալունի կապիտալ վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ 6 ամիս:  
 Սպասարկման կայանը պետք է ունենա բարձր որակավորմամբ հետևյալ ավտոտեխսպասարկման մասնագետներ.
  1. Շարժիչագործ
  2. Փոխանցման տուփ և կամրջակ վերանորոգող
  3. Ավտոէլեկտրիկ
  4. Վուկանացնող և կարգավորող
  5. Թափքի վերանորոգող և ավտոներկարար
  6. Ավտոընթացագործ և այլ մասնագետ:

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**ԳՆՈՐԴ**

Իջևանի համայնքապետարան  
 ԲԳ Տավուշի մարզ, ք Իջևան,  
 Երևանյան փողոց թիվ 6  
 ԲԿԲԳ 07601785  
 Բ/Բ 900372151044  
 ԲԳ Ֆին. նախարարություն գործառնական  
 վարչություն  
 Համայնքի ղեկավարի  
 պաշտոնակատար՝ Բ. Ղալումյան



/ստորագրություն/  
 Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱԶ Մելիք Ահարոնյան  
 Հասցե՝ ք.Իջևան, Արցախյան 4/3  
 Կոնվերս Բանկ ՓԲԸ  
 1930045519020100  
 70930303  
 Մելիք Ահարոնյան

\_\_\_\_\_

/ստորագրություն/  
 Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	.	500000	1000000	1500000	2000000	2500000	2500000	2500000	2500000	2500000	2500000	2500000	2500000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

\*\* հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

Իջևանի համայնքապետարան  
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,  
Երևանյան փողոց թիվ 6  
ՀՎՀՀ 07601785  
Հ/Հ 900372151044  
ՀՀ Ֆին. նախարարություն գործարանական  
վարչություն  
Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար՝ Հ. Ղալումյան

/ստորագրություն/  
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱԶ Մելիք Ահարոնյան  
Հասցե՝ ք. Իջևան, Արցախյան 4/3  
Կոնվերս Բանկ ՓԲԸ  
1930045519020100  
70930303  
Մելիք Ահարոնյան

/ստորագրություն/  
Կ.Տ.